ՄՇԱԿՈՒՅԹ

ՀՌԻՓՍԻՄԵ ՄԱՐՈՆՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Կերպարվեստի ամբիոնի դասախոս
maronyanhr@gmail.com

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Բանալի բառեր և արտահայտություններ. մշակույթ, ավանդույթ, ազգային, ձևվածք, կառուցվածք, հանդերձանք, գույն, երանգ, համադրություն:

Ключевые слова и выражения: культура, традиция, национальный, форма, структура, наряд, цвет, оттенок, сочетание.

Key words and expressions: culture, tradition, national, form, structure, outfit, color, shade, combination.

Նախաբան

Հայ ժողովրդի նյութական մշակույթի կարևոր դրսևորումներից մեկը տարազն է, որը ձևավորվել է պատմական Հայաստանի աշխարհագրական դիրքին, կլիմայական պայմաններին, ժողովրդի տնտեսական վիճակին և ճաշակին համապատասխան: Ազգային հանդերձանքը ազգի ինքնության, նրա դիմապատկերի ամբողջացման կարևորագույն միջոցներից մեկն է, և նրա յուրահատկությունների բացահայտումը հատկապես արդիական է գլոբալիզացման մեր օրերում: Արդիական է այն առումով, որ <<միջազգայնացումով>> տարված մեր երիտասարդության մեծ մասն արդեն թերահավատորեն է նայում մեր մշակույթին. նույն թերահավատությամբ է նայում նաև ազգային հանդերձանքին:

Սույն հոդվածի նպատակն է ցույց տալ, որ՝

1. Ազգային հագուստը մշակույթի յուրահատուկ դրսևորումներից մեկն է:
2. Ազգային հագուստը վառ կերպով արտահայտում է ժողովրդի բնավորության, սովորույթների, ավանդույթների բնորոշ կողմերը:
3. Ժամանակի ընթացքում ազգային հագուստը հարստանում է նոր նրբագծերով ու գույներով՝ պահպանելով, սակայն, իր ազգային յուրահատկությունը:

Դեպի գեղեցիկը ձգտումը հատուկ է եղել բոլոր ժողովուրդներին դեռևս մարդկային հասարակության զարգացման վաղ շրջանում: Պահպանելով ազգային ավանդույթները, փոխանցելով իրենց արհեստի

հմտություններն ու առանձնահատկությունները սերնդեսերունդ, լրացնելով դրանք՝ ժողովրդական վարպետները մինչև մեր օրերը պահպանել են ժողովրդական տարազի գաղտնիքները:

Ազգային հագուստը ոչ միայն մշակույթի վառ տարրերից է, այլ նաև դեկորատիվ կիրառական արվեստների տեսակների հիանալի համադրություն: Այն էսթետիկական ինքնաարտահայտման ինքնատիպ ձևերից մեկը, զգացմունքների արտահայտման հատուկ միջոց, նյութական և հոգևոր մշակույթի ինքնատիպ և վառ արտահայտություն է, որտեղ գույնը ժողովրդի լեզուն է: Նրա նմուշները, որոնք հավաքվել են մեր թանգարաններում, ուղղակի ապշեցնում են իրենց գունային հարստությամբ, ձևերի տրամաբանությամբ, կառուցվածքի նպատակա-հարմարությամբ: Ազգային-գյուղացիական տարազների մեզ հասած նմուշները հիմնականում պատկանում են նախակապիտալիստական զարգացման հասարակությանը, որտեղ հագուստը պատրաստվում էր բնատնտեսություններում՝ սկսած մանվածքների ստացումից մինչև պատրաստի հագուստի զարդարումը: Որպես հումք օգտագործվում էին բնական նյութեր՝ բուրդ, վուշ, կանեփ, իսկ ավելի ուշ գնվող մանվածքները և գործվածքները՝ մետաքս և այլն: Հագուստը հարուստ զարդանախշեր էր ստանում ասեղնագործություններով, նախշային մանվածքագործությամբ, նախշերով, գունավոր գործվածքներից պատրաստված հավելումներից: Ազգային տարազի ստեղծման հիմքում ընկած են սկզբունքներ և առանձնահատկություններ, որոնց համաձայն ձևավորվել է ձևվածքը, տեղակայվել են նախշերը, առանձին մասերը միացվել են այս կամ այն հավաքածուում: Սովորույթից և ժամանակից ելնելով՝ սահմանվել է, թե երբ, ինչպիսի և ինչ համադրությամբ պետք է կրել հագուստը: Անմիջականորեն աշխատանքի հետ կապված մարդու հագուստը տարբերվում էր ձևվածքի նպատակաուղվածությամբ, մեծ մասամբ այն պարզ էր և տնտեսող, որը պայմանավորված էր գործվածքի լայնությամբ, մարդու համար հարմարավետ ձևեր ստեղծելու և գործվածքն ամբողջությամբ օգտագործելու ձգտումով: Այդպիսի հանդերձանքը չէր կաշկանդում շարժումները, հարմար էր նաև գյուղացիական ծանր աշխատանքների և տոնախմբությունների համար[1]:

Ազգային տարազում տարածված էին ինչպես ուղիղ, այնպես էլ շեղ ձևվածքները: Օրինակ, բազմաթիվ ժողովուրդների մոտ հագուստի ուղիղ ձևվածքը ստանում էր գործվածքի ուղղանկյունաձև կտորներից, կտորները թևքերին, ուսագլուխներին, թևքերի տակ ուղղանկյունաձև կտրվածք

[1] Պ.Առաքել, Հայկական տարազ, «Սովետական գրող», Ե., 1983, էջ 56:

ունեին: Դա հատկապես հատկանշական էր ազգային հագուստի էժանագին տեսակների, այսպես կոչված, տունիկանման հագուստների համար, որոնք կարվում էին ուղիղ կտորներից, առանց շեղ կտրվածքների և դարսերի[2]:



Կանացի վերնազգեստի՝ ջուպպայի ձևվածքի տարբերակներ

Ավելի ուշ ժամանակների հագուստն ունի դարսեր և հավաքակարեր՝ վզի և թևքերի եզրերի շրջանում: Իրենց ձևերի և կտրվածքների բազմազանությամբ տարբերվում են անթև շրջազգեստները: Ժողովրդական դերձակների փորձը, կանխազգացողությունը, տաղանդը թույլ են տվել ստեղծել հագուստի ճկուն ձևերով նմուշներ, որոնցում արտահայտվել են եզրագծերի արտահայտչականության ներդաշնակությունը ներքին

[2] Ն. Ավագյան , Հայկական ժողովրդական տարազ (19դ-20դ սկիզբը), Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1983, էջ 143:

զգացողության հետ: Ձևվածքների գծերն ուղղակի անհրաժեշտ կարեր չեն, դրանց տեղակայումը պայմանավորում է ձևերի դինամիկան, նրա ներքին պատկերը, որը հաճախ ապշեցնում է իր գեղեցկությամբ: Այս առումով շատ հետաքրքրական են ազգային արտահագուստի գծերը, որոնք իրերի գեղարվեստական արտահայտչականության գործում ունեցել են այնպիսի դեր, ինչպես ասեղնագործությունը վերնաշապիկի համար:

Տարբեր տեսակի հագուստի՝ վերնազգեստների, շրջազգեստների, վերնահագուստի կառուցվածքային գծերը նման են այս կամ այն տեսակի ներսում, չեն կրկնում միմյանց առանձին իրերի կառուցվածքի լուծումներում: Դրանք բազմազան են: Դա վկայում է ժողովրդի ստեղծագործական մտքի մասին: Ազգային հագուստի կարևոր գծերից է զարդանախշերի տեղակայումը իրերի վրա: Այն կապված է ինչպես դետալների ձևի և կտրվածքի, այնպես էլ ամբողջ հանդերձանքի ձևի հետ: Ասեղնագործության բնույթն ու քանակը, նախշային պատկերների նշանակությունը կախված էին ազգային տարազի տնտեսող նպատակա-հարմարությունից, տարիքային և տեղական տարբերություններից, տարբեր սովորույթներից, որոնց համաձայն էլ կիրառվել է հագուստը: Այս բոլորն էլ պայմանավորել են նախշերի տեղակայումը հորիզոնական և ուղղահայաց դիրքերով, դրանց կենտրոնացումը որոշակի տեղերում: Օրինակ, վերնաշապիկներում ասեղնագործությունը տեղակայվել է մեկ կամ մի քանի շարքերով՝ միջին կարի, դրանց զուգահեռ անցնող կարերի, եզրակարերի երկայնքով, թիակներով, թևքերով անցնող կարերի երկայնքով: Ասեղնագորշության լայնակի շարքերը հաջորդում են միմյանց հորիզոնական շերտերով, որոնք ընդգծում են փեշերի, թևքերի, օձիքների եզրերը[3]:

Ազգային հագուստի էսթետիկ ազդեցությունը կապված է որոշակի տրամադրությունների՝ հանդիսավորության, ուրախության, տխրության փոխանցման հետ: Հայտնի է որ ամենագեղեցիկը տոնական հագուստն էր, որտեղ զարդարանքը կառուցված է կարմիր և նարնջագույն գույների, կրակագույնի և կանաչի ներդաշնակությամբ:

Ազգային տարազն իր ամբողջական տեսքով ներկայանում է որպես անսամբլ, որը կառուցված է ձևվածքի գծերի, ուրվագծերի նույնությամբ, գործվածքների կառուցվածքի և առաձգականության, զարդարանքի և գույնի կազմակերպող դերի, շահագործման և գեղարվեստական առավելությունների կապի հիման վրա:

[3] Ս. Դավթյան, Հայկական ասեղնագործություն, Ե.,1966, էջ 98:

Պետք է ընդգծել ազգային հագուստի ավանդական բնույթը, որն արտահայտվում է մի շարք սկզբունքների և հատկությունների շարքում: Ազգային հանդերձանքին հատուկ են ռացիոնալ կառուցվածքը, որը պայմանավորված է քաթանի լայնությամբ, մարդու կազմվածքի կառուցվածքով, կենցաղում իրերի նշանակությամբ, կառուցվածքային գծերի և զարդանախշերի բաշխման լիարժեք համաձայնեցմամբ, վառ գունային երանգավորմամբ, որը ներառում է գունային երանգների որոշակի քանակություն, որոնք դարեր ի վեր ժողովրդի համար գեղեցկության չափանիշ են եղել, սուր զարդարվածությունը, տարբեր իրերի մեկ անսամբլում միավորելու ավանդական նշանակությունը, շահագործման և գեղեցկության, նշանակության և նպատակահարմարության միասնականությունը կարևոր դեր ունեին նկարիչ-մոդելավորողների համար, որպես սկզբունքներ, որոնցով անհրաժեշտ է ղեկավարվել ստեղծագործելու ընթացքում:

Պետք է ուշադրություն դարձնել ազգային տարազի այնպիսի հատկանիշների վրա, որոնք ստեղծագործողների համար հագուստի ժողովրդական արվեստի զգացմունքային յուրացման հնարավորություններ կբացեն: Այդպիսի հատկանիշներից կարող է լինել հանդերձանքի ձևը և ձևվածքը, նրա այս կամ այն ձևի ուրվագծերը, ներքին հատվածների բազմազանությունը, որոնք հետաքրքրական են ոչ միայն ռացիոնալությամբ, այլև գեղեցկության տեսանկյունից: Դրանք կարող են լինել ազգային հանդերձանքի կոկիկությունը, զարդերի տեխնիկան, նյութի և հատկանիշների օգտագործման փորձը իրերի լուծումներում գեղարվեստական արտահայտչականության հասնելու համար:

Ակնհայտ է, որ ազգային հանդերձանքի հատկապես այս գծերն են կազմում «ժողովրդական թեմաների» հասկացության առկայությունը, որը հստատվել է մոդելավորման առաջին իսկ քայլերից սկսած: «Ժողովրդական թեմաներ» և «ժողովրդական ավանդույթներ» հասկացությունների միջև հակասություններ չկան: Ժողովրդական թեմաները ժողովրդական ավանդույթների կոնկրետ հատվածներն են իրերի ստեղծման ժամանակակից արվեստում: Այս դեպքում նկատի ունեն ազգային գեղարվեստական ավանդույթները, այսինքն՝ գեղարվեստական սկզբունքները և ժողովրդական արվեստի ստեղծագործական եղանակները, դեկորատիվ կիրառական արվեստի ստեղծագործական եղանակները, որոնք ժողովրդի կողմից փոխանցվում են սերնդեսերունդ և պահպանում իրենց նշանակությունը մինչև մեր օրերը: Ժողովրդական ավանդույթների հիմնական էությունը ժողովրդական կիրառական արվեստի էսթետիկական ազդեցության ձգողականությունն է, նրա զարդարանքը, այն

լավատեսությունը, որը ցանկացած ժամանակի դիտողին է փոխանցվում՝ կախված համընդհանուր հասարակական ճաշակից:

Ինչպես յուրաքանչյուր ժողովրդի,այնպես էլ հայերի ազգային հագուստի ձևավորման համար իրենց մեծ ազդեցությունն են ունեցել, պատմա-հասարակական գործընթացները, որոնք նպաստում էին հագուստի հատուկ ձևերի ստեղծմանը: Միաժամանակ տարազը սերտ առնչություն է ունեցել ժողովրդի, պատմական զարգացման հետ[4]:

Հայ ժողովրդի տարազն անցնելով պատմական զարգացման երկար ուղի՝ չի սահմանափակվել լոկ ազգային նեղ շրջանակներում, քանի որ տնտեսական և քաղաքական կապերով իր պատմական զարգացման առանձնահատկությամբ նա անբաժան մի մաս է եղել Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների տարազաձևերի ընտանիքի, չկորցնելով, սակայն, իր ազգային ինքնատիպությունը[5]:

Հայ ժողովրդի տարազը նրա ինքնապահպանման ազդակներից մեկն է եղել: Նույնիսկ օտար փոխառությունների անհրաժեշտության դեպքում, հայ ժողովուրդը միշտ ստեղծագործական մոտեցում է ունեցել ըստ իր տոհմային ճաշակի և դարավոր ավանդույթների: Հատկապես պետք է նշել հայ կնոջ ցուցաբերած ավանդապահությունն այդ հարցերում: Նա միշտ ի հայտ է բերել ինքնուրույն ճաշակ, ձևերի և գույների վայելչության, ներդաշնակության բնածին նրբազգացություն, խորշել է անբովանդակ, անհեթեթ ձևերից: Հայկական տարազի զանազան փոփոխակները նման են մեր լեզվի բազմաթիվ բարբառներին, որոնք բոլորն էլ սերտորեն կապված են հիմնական լեզվի հետ և նրա նման մեր դարավոր մշակույթի անկրկնելի գանձերից են:

Բացի դրանից, հայ ժողովուրդը, գտնվելով Արևելքի և Արևմուտքի ոճերի բախման ու համադրման մի մարզում, հաճախ ինքն էլ ներգործուն դեր է կատարել հարևան ժողովուրդների տարազի վրա:

Եզրակացություն

Հոդվածում ներկայացվում է ազգային հագուստի ավանդական բնույթը, նրան հատուկ ռացիոնալ կառուցվածքը և գործոնները, որոնցով պայմանավորված է այն: Ընդգծվում է կառուցվածքային գծերի և զարդանախշերի բաշխման համաձայնեցումը, գունային երանգավորումը, տարբեր իրերի մեկ անսամբլում միավորելու ավանդական

[4] Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա., Ե., 1944, էջ 216:

[5] Է. Հերոդոտ, Վ. Հացունի, Պատմություն հին հայ տարազին, Վենետիկ, 1923, էջ 15:

նշանակությունը, որոնք դարեր ի վեր ժողովրդի համար գեղեցկության չափանիշ են եղել:

Հատուկ ուշադրություն է դարձված ազգային տարազի ձևվածքներին՝ առանձնացնելով և ներկայացնելով ըստ ժամանակաշրջանների և կառուցվածքային առանձնահատկությունների: Եվ իհարկե, ընդգծվում է ազգային ավանդույթների պահպանման կարևորությունը, որոնք փոխանցվելով սերնդեսերունդ՝ մինչև մեր օրերն են հասցրել ազգային տարազի գաղտնիքները, որը ոչ միայն մեր մշակույթի ամենավառ տարրերից է, այլև դեկորատիվ-կիրառական արվեստների հիանալի համադրություն:

Рипсиме Маронян

Особенности национального костюма принципы построения и формирования

Резюме

В статье представлен традиционный характер национального костюма, его особая рациональная структура и факторы, его определяющие. Подчеркнуты согласованность конструктивных линий и распределения орнаментов, цветовая тонировка, традиционное значение соединения различных вещей в один ансамбль, которые веками были для народа эталоном красоты.

Особое внимание уделено формам национального костюма, выделению и представлению их по эпохам и структурным особенностям. И конечно, подчеркивается важность сохранения национальных традиций, которые, передаваясь из поколения в поколение, донесли до наших дней секреты национального костюма, являющегося не только одним из самых ярких элементов нашей культуры, но и прекрасное сочетание декоративно-прикладного искусства.

Hripsime Maronyan

CHaracteristics of the national costume principles of constraction and decoration

Summary

The article presents the traditional character of the national costume, its special rational structure and the factors that determine it. The consistency of constructive lines and the distribution of ornaments, color tinting, the traditional

meaning of combining various things into one ensemble, which have been the standard of beauty for the people for centuries, are emphasized.

Particular attention is paid to the forms of the national costume, their choice and presentation according to epochs and structural features. And, finally, the importance of preserving national traditions is emphasized, which, passed down from generation to generation, have brought to our days the secrets of the national costume, which is not only one of the brightest elements of our culture, but also a wonderful combination of arts and crafts.

Խմբագրություն է ուղարկվել 25. 08. 2022թ.
Հանձնարարվել է գրախոսության 10. 09. 2022թ.
Տպագրության է հանձնարարվել 16. 09. 2022թ.